

ՀՀ քաղաքաշինության նախարար պարոն Վարդան Վարդանյանի ելույթը

Կարիքավոր ընտանիքների բնակարանային ապահովության ուղղությամբ ՀՀ կառավարության քաղաքականության մասին

**Մեծարգո պարոն վարչապետ,
պարոն Գլխավոր Հանձնակատար,
տիկնայք և պարոնայք.**

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման օրվանից սկսած, բազմաթիվ այլ հիմնախնդիրների հետ մեկտեղ՝ կառավարության առջև ծառայան նաև անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման խնդիրը, որը պայմանավորված էր՝

- Աղրբեջանից փախստականների ներհոսքով.
- 1988թ. տեղի ունեցած Սպիտակի երկրաշարժի հետևանքների վերացման անհրաժեշտությամբ.
- խորհրդային շրջանից ժառանգություն ստացած հիմնախնդիրներով, այդ թվում՝ վթարային քանդման ենթակա բազմաբնակարան շենքերի առկայությամբ և այլն:

Խնդիրը հետագայում ավելի սրվեց 1992-1993թթ. ՀՀ սահմանամերձ բնակավայրերի ոմբակոծության, 1997թ. Նոյեմբերյանի երկրաշարժի հետևանքների վերացման, ինչպես նաև հանրապետությունում սողանքային երևույթների ակտիվացման առավել վտանգավոր գոտիներում գտնվող բնակելի տների բնակիչների անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ:

Ակնհայտ է, որ միայն պետական բյուջեի միջոցների հաշվին բնակարանային ապահովման բազմաթիվ խնդիրների լուծումը դժվար իրագործելի է: Այս առումով չափազանց գնահատելի է միջազգային դոնոր կազմակերպությունների, հատկապես ՄԱԿ-ի համակարգի կազմակերպությունների աջակցությունը՝ փախստականների հիմնախնդիրների լուծման գործում, որի շնորհիվ և կառավարության ջանքերով այդ ուղղությամբ զգալի աշխատանք է կատարվել:

Սկսած 1994 թվականից մինչ օրս ՄԱԿ-ի փախստականների հարցերով Գերագույն հանձնակատարի, փախստականների հարցերով Նորվեգական խորհրդի, Գերմանիայի կառավարության ֆինանսական աջակցությամբ և ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին փախստականների համար կառուցվել և նրանց է հատկացվել **6000 քրթեջ և բնակարան**: Նշված բնակարաններն ու քրթեջները անհատույց սեփականաշնորհվել են փախստականների կողմից:

Վերը թվարկված խնդիրների ուսումնասիրության արդյունքներով՝ Կառավարության կողմից ձևավորվեց դրանց լուծմանն ուղղված պետական աջակցության նպատակային ծրագրային մոտեցումը: Արդյունքում, ընդունվեցին մի շարք ծրագրեր, որոնցից իրենց ծավալով և խնդրի սրությամբ առանձնացվում են Սպիտակի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների և 1988-1992թթ. բռնագաղթված փախստական ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման ծրագրերը: Վերջիններս մշտապես եղել են կառավարության, միջազգային դոնոր կազմակերպությունների և հանրության առանձնահատուկ ուշադրության կենտրոնում:

Ընդունված նպատակային ծրագրերի շրջանակներում 2000-2010թթ. իրականացված միջոցառումների շնորհիվ մոտ **21 հազար ընտանիքների** հնարավորություն է ընձեռվել բարելավելու իրենց բնակարանային պայմանները:

Այնուհանդերձ, առկա են մի շարք խնդիրներ, որոնց պատճառով շարունակում է պահպանվել բնակարանային պահանջարկի բարձր մակարդակ, որոնց շարքին են դասվում՝

- նախորդ տարիներին ընդունված և իրականացման փուլում գտնվող պետական ծրագրերի շրջանակներում ընդգրկված տեխնաժին և բնական աղետների հետևանքով անօթևան մնացած (փախստականներ, աղետի գոտի, վթարային շենքեր և այլն) և ժամանակավոր կացարաններում, տնակներում, հասարակական նշանակության այլ օբյեկտներում բնակվող շուրջ **15 հազար ընտանիքների** բնակապահովման,
- ընդունված պետական աջակցության ծրագրերի շրջանակներից դուրս՝ աղքատության ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված շուրջ **18 հազ. անօթևան ընտանիքների** բնակապահովման,
- գերբնակեցված բնակարաններում ապրող շուրջ **33 հազ.** և կոմունալ բնակեցված շուրջ **2 հազ.** ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման խնդիրները:

Դրա հետ մեկտեղ առկա են նաև ռազմական գործողությունների հետևանքով Արծվաշեն համայնքից 1992 թվականին տեղահանված և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի և այլ մարզերի բնակավայրերում բնակություն հաստատած ընտանիքների բնակարանային խնդիրները: Նշված ընտանիքների բնակարանային պայմանների բարելավմանն աջակցելու նպատակով ՀՀ կառավարության կողմից տարբեր տարիներին ընդունվել են մի շարք որոշումներ:

Մասնավորապես, վերջերս հավանության արժանացավ տեղահանվածների բնակարանային պայմանների բարելավմանն ուղղված հայեցակարգը: Հայեցակարգի համաձայն 2012-2014թթ. ընկած ժամանակահատվածում նախատեսվում է առաջնահերթ կարգով անդրադառնալ քանդման ենթակա վթարային տներում և հասարակական նշանակության օբյեկտներում բնակվող **482 ընտանիքների** խնդիրների լուծմանը:

Կարևորելով բնակարանային ոլորտում առկա խնդիրները՝ դրանք շեշտադրվել են ոլորտում վարվող պետական քաղաքականության շրջանակներում խնդիրների լուծման հետևյալ մոտեցումների կիրառմամբ.

- քաղաքացիներին նպատակային ֆինանսական աջակցության տրամադրման մոտեցումը՝ շուկայից բնակարանի գնման կամ մասնավոր բնակարանային ֆոնդից բնակելի տարածության վարձակալելու համար,
- նոր շինարարության կամ գոյություն ունեցող շինությունների վերականգնման/վերակառուցման, կիսակառույց բնակելի տների ավարտման աշխատանքների իրականացում՝ ելնելով տնտեսական նպատակահարմարությունից և քաղաքաշինական նկատառումներից:
- ստեղծվող սոցիալական բնակարանային ֆոնդում բնակելի տարածության հատկացում:

Հարգելի գործընկերներ, այժմ թույլ տվեք ավելի մանրամասն ներկայացնել փախստականների և ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանվածների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված քայլերը:

1988-1992 թվականներին բռնագաղթի առաջին իսկ օրերից հանրապետության կառավարությունը և տեղական իշխանության մարմինները մեծ ծավալի աշխատանքներ են իրականացրել Հայաստանի Հանրապետությունում հանգրվանած **360 հազար**

փախստականների տեղաբաշխման-տեղավորման և այլ առաջնահերթ խնդիրների լուծման ուղղությամբ:

90-ական թվականների կեսերից, երբ ակնհայտ դարձավ, որ փախստականների կամավոր վերադարձն իրենց նախկին բնակության վայրեր՝ նրանց կյանքի անվտանգության երաշխիքների բացակայության պատճառով, կանխատեսելի ժամանակահատվածում իրատեսական չէ, կառավարությունը որդեգրեց փախստականների ինտեգրման քաղաքականությունը: Արդյունքում, ընդունվեցին մի շարք իրավական ակտեր, ուղղված ինչպես փախստական ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանը, այնպես էլ նրանց իրավունքների ու սոցիալական պաշտպանվածության հետ կապված հարցերի կարգավորմանը: Մասնավորապես, կառանձնացնեի՝

- 2002 թվականին ընդունված **<1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած փախստականների համար կառուցված բնակարանները սեփականության իրավունքով փախստականներին հատկացնելու մասին>** ՀՀ օրենքը: Օրենքով կարգավորվել են փախստականների, այդ թվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների միջոցներով Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցված բնակելի շենքերի բնակարանները, քրեթշատիպ տները սեփականության իրավունքով նրանց հատկացնելու հետ կապված հարաբերությունները.

- ՀՀ կառավարության կողմից 2004 թվականին հաստատված՝ **1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագիրը**, որով նախատեսվում է առաջնահերթ լուծել բնակարանի ամենակարիքավոր այն փախստական ընտանիքների բնակարանային հարցը, որոնք բնակվում են ժամանակավոր կացարաններում և վագոն-տնակներում: Ծրագրի ընդունման անհրաժեշտությունն առաջացավ նկատի ունենալով փախստականների բնակարանային հիմնախնդիրը մեկ ծրագրով և միանգամյա լուծման դժվարությունները՝ թե պահանջվող ֆինանսական միջոցների մեծ ծավալի և թե իրականացման ժամկետների տեսակետից: Արդյունքում, փախստականների բնակարանային ապահովության խնդիրը դիտարկվում է ոչ թե մեկ ընդհանուր ծրագրի շրջանակներում, այլ այն տարանջատվել է ըստ կարիքավորության և փուլերի՝ առանձին համապատասխան ենթածրագրերի, որոնց լուծումն ավելի իրատեսական է:

ՀՀ կառավարության կողմից հաստատված փախստական ընտանիքների բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի դրույթների համաձայն 2005-2009թթ. պետական միջոցների հաշվին իրականացված բնակարանների գնման վկայագրերի տրամադրման ծրագրի շրջանակներում՝ հանրապետության մարզերում և Երևան քաղաքում ժամանակավոր կացարաններում և վագոն-տնակներում բնակվող փախստական ընտանիքներից **782 ընտանիքներ** ձեռք են բերել բնակարան:

Չնայած իրականացված միջոցառումներին, Հայաստանում ժամանակավոր կացարաններում եւ վագոն-տնակներում բնակվող դեռևս **1175 ընտանիք** համարվում է «1988-1992 թթ. Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի» շահառու: Նշված ընտանիքներից **860-ը** բնակվում են Երվանում: Խնդրի լուծման համար պահանջվում է շուրջ **45 միլիոն ԱՄՆ դոլար**:

Բնակարանային խնդիրների լուծման հետ մեկտեղ՝ փախստականներով բնակեցված բնակավայրերում իրականացվել են նաև այդ համայնքների զարգացմանն ուղղված ծրագրեր, որոնք նպատակ են հետապնդում ոչ միայն փախստականների, այլև տեղական բնակչության

կենսական կարիքների բավարարմանը, դրանով իսկ նպաստելով ինտեգրման գործընթացի արդյունավետությանը:

Մասնավորապես, ենթակառուցվածքների մասով՝ փախստականների ավելի մեծ կենտրոնացում ունեցող Արարատի, Արմավիրի, Կոտայքի և Սյունիքի մարզերի բնակավայրերում պետական միջոցների հաշվին կառուցվել, վերանորոգվել ու վերականգնվել են մոտ 30 կմ ջրագծեր, 37 դպրոցներ, 16 մանկապարտեզներ և այլ կենսական նշանակության հաստատություններ, ինչպես նաև հիմնանորոգվել են 27 հազ.քառ.կմ մակերեսով ճանապարհահատվածներ: Բացի պետական միջոցներից, այդ ուղղությամբ աշխատանքներ են իրականացվել ներգրավված այլ՝ Համաշխարհային Բանկի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական զարգացման բանկի (KFW), «Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամի, Ասիական Զարգացման բանկի, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի (EBRD) միջոցների հաշվին:

Հայտնի է, որ իրագործման առումով ամենաձանրն են համարվում սոցիալական ուղղվածության ծրագրերը: Այստեղ, բացի բուն համակարգման և աշխատանքների իրականացման խնդիրներից՝ ի հայտ են գալիս անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթայթման հարցերը:

Փախստականների սոցիալական և տնտեսական ինտեգրումը պահանջում են միավորված ջանքեր և միասնական մոտեցումներ, բոլոր գործընկերների փորձն ու կարողությունները՝ առկա, այդ թվում՝ բնակարանային ապահովման խնդիրներին կայուն լուծում տալու նպատակով:

Ամփոփելով խոսքս, հավաստիացնում եմ, որ Հայաստանի կառավարությունը առաջնահերթ է համարում բռնագաղթած, ժամանակավոր կացարաններում բնակվող անձանց ընտանիքներին բնակարաններով ապահովելու հարցը: Ակնկալելով աջակցություն ներկայացված խնդիրների լուծման գործընթացում, պատրաստակամություն եմ հայտնում անել հնարավորը՝ համագործակցությունը շարունակելու և համատեղ նոր նախաձեռնություններ ու գաղափարներ կյանքի կոչելու ուղղությամբ:

Շնորհակալություն: